ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարավում է մրցույթ ՀՀ ԿԳՄՄՆ «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Խոհարարական գործ» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետների և «Ինֆորմատիկա» (տարեկան 236, շաբաթական 5.9 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղերի համար:

Արտադրական ուսուցման վարպետի և ուսուցչի վարձատրությունը որոշվում է՝ ըստ հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի և դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով (յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին, ըստ ուսումնարանի կողմից կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմս, որը բաղկացած է 5 հարցից):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) Դիմում
2) Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) բնօրինակը
3) Անձնագիր (բնօրինակը և պատճենը)
4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5) Ինքնակենսագրություն (Ձև4)
6) Մեկ լուսանկար 3×4 չափի
7) Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն):
9) Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան կոչումը հաստատող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում. 2023թ. հունվարի 12-ից մինչև 26-ը (ներառյալ) ամեն օր ժամը 10^{00}-ից 16^{00}-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. **հունվարի 31-ին** ժամը 13^{00}-ից, Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարանում. հասցեն՝ ք. Եղվարդ Երևանյան 10:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 26 91 26, 077 56 39 52:

ՏՆՕՐԵՆ՝ ՄԱՄԻԿՈՆ ՇԱՀԲԱԶՅԱՆ